Կոնգրես-ՀԺԿ դաշինքի ընտրական ծրագիրը

Ծրագիրը ներկայացնում է ԿՈՆԳՐԵՍ-ՀԺԿ Դաշինքի մոտեցումներն առ այն, թե Հայաստանում իրատեսական ինչ քայլերով կարելի է ստեղծել **պետության օրինակելի մի մոդել**, որ ծառայում է իր քաղաքացիների անվտանգության, բարեկեցության, ազատության եւ երջանկության ձգտումներին:

Այդ մոդելի հիմքում պետք է ընկած լինեն հետեւյալ սկզբունքները.

1. ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ, ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԻԴՐԱՑԻՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի անվտանգության, անգամ՝ **գոյության** հրամայականն է դուրս գալ հարեւան պետությունների հետ **հակամարտությունների մեջ գտնվող եւ շրջափակումներից տնտեսապես խեղդվող** երկրի վիճակից եւ դառնալ **բոլոր հարեւանների հետ հաշտ ու խաղաղ ապրող, ազատ առեւտուր, տնտեսական փոխշահավետ համագործակցություն եւ հաղորդակցության բաց ուղիներ ունեցող** երկիր:

Հաշտությունը կապահովի Հայաստանի եւ Արցախի անվտանգությունը, վերջինիս ինքնորոշման իրավունքի իրացումը: Այն վերջ կդնի ռազմաճակատի գոտում հարյուրավոր զինվորների եւ խաղաղ բնակչության կորուստներին, թույլ կտա դադարեցնել սպառազինությունների մրցավազքը եւ շեշտակիորեն նվազեցնել ՀՆԱ-ի 4-5 տոկոսի հասնող ռազմական ծախսերի ծանր բեռը: Խաղաղության հաստատումը հնարավոր կդարձնի Հայաստանի մասնակցությունը տարածաշրջանային խոշոր տնտեսական նախագծերում, կնպաստի ներդրումների ներգրավմանը, տնտեսական վերելքին, տասնյակ հազարավոր աշխատատեղերի ստեղծմանը, կենսաթոշակների եւ աշխատավարձերի շեշտակի աճին: Այս ամենը ոչ միայն կդադարեցնի արտագաղթը, այլեւ պայմաններ կստեղծի երկիրը լքած մեր համաքաղաքացիների զանգվածային վերադարձի համար:

Խաղաղության ծրագրի իրականացումը, թեկուզ ոչ բավարար, սակայն անհրաժեշտ պայման է Հայաստանում ստեղծված քաղաքական, տնտեսական, բարոյական արատավոր համակարգը հիմնովին առողջացնելու համար:

2. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Հայաստանի այսօրվա պետական հաստատություններին բնորոշ է քաղաքացու եւ ձեռնարկատիրոջ նկատմամբ գիշատիչ վերաբերմունքը: Դրանք ծառայում են պետական իշխանությունը յուրացրած պաշտոնյաների նեղ շրջանակի շահերին, իսկ քաղաքացիների ճնշող մեծամասնությունն այդ շրջանակի կողմից դիտարկվում է որպես անխնա կեղեքման ենթակա իրավազուրկ զանգված: Ոտնահարվում են ազատության, սեփականության եւ իրավական պաշտպանվածության հիմնարար իրավունքները: Իշխանության կամայականությունները, խամաճիկ դատարանները, վաշխառուական կապիտալը ունեզրկում են քաղաքացուն եւ ձեռնարկատիրոջը:

Մեր նպատակն է փոխարինել **գիշատիչ** պետական հաստատությունները **զարգացումը խթանող**, քաղաքացու անվտանգությունը, սեփականությունը, ազատությունն ու արժանապատվությունը պաշտպանող պետական հաստատություններով:

3. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻՍ ՀԱՄԱՐ

Աշխարհում հաջողության են հասնում այն պետությունները, որոնք սպասարկում են ոչ թե իշխանավորների **նեղշրջանակի**, այլ պետության **բոլոր քաղաքացիների** շահերը: Պետության մեջ չպետք է լինի բարձրագույն պետական ղեկավարների մերձավորների եւ օրենքից վեր կանգնած արտոնյալների վերնախավ, որը տիրապետում է երկրի ողջ հարստությանը եւ օտարում մնացած բոլորին երկրի կառավարումից եւ ռեսուրսների բաշխումից: Ոչ ոք չպետք է ունենա մենաշնորհ ո՛չ քաղաքականության, ո՛չ տնտեսության, ո՛չ էլ որեւէ այլ բնագավառում: Կարճ ասած, պետությունը պետք է **ունենա ո՛չ թե օտարող, վանող**, այլ **ներառող, ընդգրկող բնույթ՝** ստեղծելով պաշտպանվածության միջավայր, հավասար պայմաններ եւ հնարավորություններ բոլոր գաղափարական ուղղությունների, քաղաքական ուժերի, հասարակական հոսանքների, սոցիալական խմբերի, տնտեսվարող սուբյեկտների եւ անհատների համար:

4. ՇՆՈՐՀԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Բռնի ուժի, ընտրակեղծարարության, խաբեության, անգրագիտության եւ անբարոյականության վրա հիմնված ներկա **ավազակապետական համակարգի** փոխարեն, պետք է կառուցվի նոր՝ **շնորհապետական**

(մերիտոկրատիկ) հասարակարգ: Դա այն համակարգն է, որում մարդիկ գնահատվում են ըստ **շնորհի**, արժանիքի, վաստակի: Պետությունը պետք է ղեկավարվի կրթված, խելացի եւ պարկեշտ, անհրաժեշտ գիտելիքներ եւ փորձառություն ունեցող անձանց կողմից: Պետք է արմատախիլ անել կեղծարարության, խաբեության, փչացածության (կոռուպցիայի) արատավոր ավանդույթները: Պետական կառավարման հիմքում պետք է դնել մաքուր ընտրությունները, մրցակցային հավասարությունը, թափանցիկությունը եւ հրապարակայնությունը: Պետական պաշտոնյաների պաշտոնական առաջխաղացման բոլոր փուլերում պետք է գործի ազնիվ մրցույթների եւ որակավորման քննությունների համակարգ՝ սկսած դպրոցներից եւ ԲՈՒՀ-երից:

ԿՈՆԿՐԵՏ ՔԱՅԼԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Վերոհիշյալ նպատակների եւ սկզբունքների իրագործման համար ԿՈՆԳՐԵՍ-ՀԺԿ Դաշինքն առաջարկում է կոնկրետ քայլերի հետեւյալ Ծրագիրը՝ ըստ համապատասխան բնագավառների:

Անվտանգություն եւ արտաքին քաղաքականություն

- Հետեւողական ջանքեր գործադրել ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկած եւ ՀՀ իշխանությունների կողմից 2007 թվականից ընդունված Ղարաբաղյան կարգավորման ծրագրի շուտափույթ իրագործման ուղղությամբ, վերականգնելով ԼՂՀ-ի, որպես հակամարտության լիիրավ կողմի մասնակցությունը կարգավորման գործընթացին:
- Կարգավորել Թուրքիայի հետ հարաբերությունները առանց նախապայմանների, բացառելով Հայոց ցեղասպանության փաստը կասկածի տակ դնող միջպետական հանձնաժողովի ստեղծումը:
- Այս երկու խնդիրների կարգավորումը հնարավորություն կտա ապաշրջափակել հայ-ադրբեջանական եւ հայ-թուրքական երկաթուղային, ավտոմոբիլային եւ ավիացիոն բոլոր երթուղիները, մասնակցել տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն գործընթացներին եւ նախագծերին:

Ազնիվ եւ արդյունավետ կառավարում եւ տնտեսական զարգացման խթանում

- Կիրառել կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 20-րդ հոդվածը հետադարձ ուժով՝ սկսած 1991 թվականից, եւ պետբյուջե վերադարձնել ապօրինի հարստացմամբ ձեռք բերված միջոցները:
- Ազատ եւ հավասար մրցակցություն հաստատելու, մենաշնորհների և օլիգոպոլիաների դեմ արդյունավետորեն պայքարելու նպատակով՝ ընկերությունների համար սահմանել շուկայում ունեցած մասնաբաժնի առավելագույնը 33 տոկոսի շեմ: Սահմանափակումը պարտադիր կգործի լայն սպառման ապրանքների շուկաների համար, իսկ այլ շուկաների վրա կտարածվի օրենքով:
- Հարկային եւ մաքսային քաղաքականության հիմքում դնել ներդրումների գրավչության բարձրացման, գործարարության խրախուսման եւ հարկային բազայի ընդլայնման գաղափարախոսությունը: Լիովին պարզեցնել հարկային եւ մաքսային համակարգը, հարկատեսակների թիվը 15-ից իջեցնել 6 (շահութահարկ, եկամտահարկ, ակցիզային հարկ, ավելացված արժեքի հարկ, տեղական հարկ, ինչպես նաեւ մաքսատուրք): Շրջանառության հարկը կարող է կիրառվել միայն որպես փոխարինող հարկ: Շահութահարկի, եկամտահարկի եւ ավելացված արժեքի հարկերի դրույքաչափերը սահմանել 15 տոկոս: Վերացնել ավելացված արժեքի հարկի գանձումը սահմանում:
- Ներմուծվող ապրանքների մաքսատուրքը հաշվարկել բացառապես հաշիվ-ապրանքագրում (ինվոյսում) նշված գնի հիման վրա: Ինվոյսի կեղծ լինելու ապացույցը բացառապես պետության բեռն է:
- Ներդրումների խրախուսման նպատակով, 1-5 միլիոն ԱՄՆ դոլարի հասնող ներդրում կատարած ընկերություններին 2 տարով, իսկ 5 միլիոնից ավելի ներդրում կատարածներին՝ 5 տարով ազատել շահութահարկից: Վերաներդրվող շահույթը ազատել շահութահարկից: Ինովացիոն բիզնեսը ազատել շահութահարկից առաջին 2 տարիների համար, հետագա 5 տարիներին այդ գումարները բյուջե մուծելու պայմանով:
- Գազի ու էլեկտրական էներգիայի սակագները նվազեցնել 25 տոկոսով՝ սակագնի հաստատման մեթոդաբանության փոփոխության եւ կորուստների ու անարդյունավետ ծախսերի կրճատման միջոցով:
- Վարել դրամավարկային այնպիսի քաղաքականություն, որը բացառում է դրամի արհեստական արժեւորումը եւ ուղղված է արտահանման խրախուսմանը:
- Առնվազն երկու անգամ նվազեցնել երթեւեկության կանոնների խախտման համար գանձվող տուգանքները:
- Ծանր վիճակում հայտնված գյուղացիական տնտեսությունների համար կիրառել վարկային համաներում, զրոյացնել գյուղացիական վարկերի տույժ-տուգանքները, գյուղացիական տնտեսությունների վարկային պարտքերի դուրս գրում կամ մասնակի մարում:

- Ուսումնասիրել 2006-2012 թվականներին Նաիրիտ գործարանի բաժնեմասերի վաճառքի գործարքների օրինականությունը, վերականգնել դրանց արդյունքում գործարանին և պետությանը հասցված վնասը, պատասխանատվության ենթարկել յուրացումների և չարաշահումների համար պատասխանատուներին: Մշակել Նաիրիտի վերագործարկման նոր ծրագիր:

Առողջապահություն եւ Սոցիալական Արդարություն

- Մեկ տարվա մեջ միջին կենսաթոշակը բարձրացնել նվազագույն սպառողական զամբյուղի մակարդակի (55000 դրամ): 3 տարվա մեջ նվազագույն թոշակը բարձրացնել սպառողական զամբյուղի մակարդակի: 5 տարվա մեջ կենսաթոշակների միջին չափը հասցնել միջին աշխատավարձի 40 տոկոսին:
- Առողջապահության ոլորտի պետական բյուջետային ֆինանսավորումը հասցնել ՀՆԱ առնվազն 3 տոկոսի: Ներդնել պարտադիր համընդհանուր բժշկական ապահովագրության համակարգ:
- Պետական աջակցությամբ ստեղծել ապահովագրական համակարգ, որը գյուղատնտեսությունը կպաշտպանի ցրտահարությունից, կարկտահարությունից եւ այլ բնական աղետներից:
- Զգալիորեն բարձրացնել պայմանագրային զինծառայողների, սպաների եւ ենթասպաների աշխատավարձը: «15 օր ծառայություն, 15 օր հանգիստ» գործող կարգի փոխարեն կիրառել «7 օր ծառայություն, 7 օր հանգիստ» կարգը:
- ԽՍՀՄ խնայբանկի ավանդները ձևակերպել որպես պետական պարտատոմս և դրանք մարել 2 անգամ ավելի մեծ չափով և 2 անգամ ավելի արագ, քան նախատեսված է գործող օրենսդրությամբ:
- Վերացնել պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը:

Գիտություն, Կրթություն, Տեխնոնոլոգիաներ, Մշակույթ եւ Տուրիզմ

- Անցնել կրթության հավաստագրային ֆինանսավորման: Պետք է ֆինանսավորվեն ոչ թե դպրոցները, այլ քաղաքացիները, որոնք էլ կընտրեն համապատասխան կրթօջախը: Սահմանել բարձրագույն կրթության պետական ֆինանսավորման նվազագույն շեմ՝ ՀՆԱ առնվազն 1 տոկոսի չափով, իսկ հանրակրթության, միջին և նախնական մասնագիտական կրթության ծախսերը՝ ՀՆԱ 3 տոկոսի չափով:
- ԲՈՒՀը և մասնագիտությունն ընտրելու ազատ իրավունքը վերապահել դիմորդին: Կրթական նախորդ աստիճանում արձանագրած ցուցանիշների հիման վրա դիմորդը կստանա համապատասխան կրթական դրամաշնորհ և

կընտրի իր մասնագիտությունը: Պետպատվերն այսպիսով կարգավորվելու է ոչ թե մասնագիտություններին հատկացվող տեղերի քանակով և ըստ ԲՈՒՀ-երի տեղաբաշխմամբ, այլ դիմորդներին և ուսանողներին կրթական դրամաշնորհների տրամադրմամբ:

- Գիտության բնագավառում կիրառել աշխարհում իր արդյունավետությունն ապացուցած՝ ԲՈՒՀ-երը եւ գիտահետազոտական ինստիտուտները մեկ միասնական հաստատության մեջ միավորելու քաղաքականություն: Գիտությունների Ազգային Ակադեմիայի համակարգի գիտական կազմակերպություններին հնարավորություն ընձեռել միավորվելու համալսարանների և այլ հետազոտական կենտրոնների հետ, ելնելով գիտության տվյալ ոլորտի զարգացման շահերից:
- Գիտական հետազոտությունների համար նախատեսված միջոցները պետական բյուջեից հատկացնել թեմատիկ ֆինանսավորման սկզբունքով, բազային ֆինանսավորման սխեման բացառության կարգով կիրառելով միայն ռազմավարական նշանակության գիտահետազոտական ծրագրերի դեպքում: Գիտության զարգացմանը հատկացնել ՀՆԱ առնվազն 1 տոկոսը:
- Վերացնել իշխանությունների կողմից կիրառվող՝ համալսարանների եւ դպրոցների կուսակցականացման ապօրինի գործընթացը եւ օրենսդրորեն ամրապնդել համալսարանների իրական ինքնավարության ու ազատության երաշխիքները, մասնավորապես՝ արգելել պետական պաշտոնյաների ներգրավումը համալսարանների ղեկավար մարմիններում:
- Պետականորեն աջակցել ժամանակակից համակարգչային, ծրագրային եւ ինտերնետային տեխնոլոգիաներում հայերենի կիրառման համար անհրաժեշտ սարքային եւ ծրագրային արտադրանքի ստեղծմանը:
- Պետականորեն աջակցել տեղեկատվական եւ այլ բարձր տեխնոլոգիաների զարգացմանը, հատկացնելով տարեկան ՀՆԱ առնվազն 1 տոկոսը համապատասխան բիզնես-ինկուբատորների եւ վենչուրային կապիտալի զարգացման գործին:
- Էականորեն կրճատել Հայաստանի էներգետիկայի կախվածությունը գազի եւ այլ ածխաջրածնային վառելիքից, խրախուսելով այլընտրանքային էներգետիկայի զարգացումը, մասնավորապես երաշխավորելով արեւային էներգիան էլեկտրականի փոխակերպող պանելների արտադրության եւ սպառողների կողմից դրանց ձեռքբերման վարկավորումը:
- Կապիտալ ներդրումներ կատարել տարեկան ՀՆԱ առնվազն 2 տոկոսի չափով զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման եւ զբոսաշրջիկների համար գրավիչ մշակութային օջախների եւ օբյեկտների պահպանման եւ ստեղծման համար:
- Պետական աջակցությունը մշակութային նախաձեռնություններին իրականացնել միայն ծրագրային նախագծերի միջոցով՝ բաց մրցույթներով: Բացառել վարչական միջամտությունը ստեղծագործական

գործընթացներին։ Մշակութային քաղաքականության մեջ ապահովել բազմաձև մասնակցության հնարավորություններ, ինչպես անհատական, այնպես էլ հասարակական, համայնքային և այլ բնույթի նախաձեռնությունների տեսքով:

- Օրենսդրորեն պետական հատուկ կարգավիճակ տալ բացառիկ մշակութային ժառանգություն հանդիսացող հաստատություններին և պատմաճարտարապետական հուշարձաններին, ապահովելով հասարակական մասնակցությունը դրանց կառավարմանը։
    - Պետական հոգածության ներքո պահել ազգային փոքրամասնությունների մշակութային և լեզվական բազմազանությունը՝ այն դիտարկելով որպես Հայաստանի մշակութային միջավայրի բաղկացուցիչ:
    - Վերացնել պետական արտոնյալ հովանավորչությամբ մշակույթի գործիչների «արժևորումը»: Հրաժարվել պետության կողմից զանազան տիտղոսներ և կոչումներ շնորհելու պրակտիկայից:

Ազատություն եւ ժողովրդավարություն

- Բացահայտել Մարտի 1-ի գործը եւ պատժել բոլոր մեղավորներին, պետական հատուցում տալ Մարտի 1-ի զոհերի ընտանիքներին, պետության կողմից ապօրինի բռնությունների ենթարկված բոլոր քաղաքացիներին։ Մարտի 1-ը հռչակել 2008թ. մարտի 1-ի եւ պետական ահաբեկչության ու բռնաճնշումների զոհերի հիշատակի օր:
- Անցկացնել ազատ եւ արդար ընտրություններ, հաստատել զուտ համամասնական (առանց վարկանիշային քվեարկության) ընտրակարգ, բավարարել ընտրությունների դիտորդական վերահսկողության եւ լրագրողական լուսաբանման համար անհրաժեշտ քաղաքացիական հասարակության բոլոր պահանջները, վերացնել ընտրակաշառքի բաժանման հանցավոր պրակտիկան:
- Վերականգնել կառավարման նախագահական-խորհրդարանական սահմանդրական մոդելը եւ 2018 թվականին անցկացնել ուղիղ նախագահական ընտրություններ:
- Ազատել բոլոր այն ազատազրկվածներին, ովքեր համապատասխանում են ԵԽԽՎ-ի 1900 բանաձեւով սահմանված քաղբանտարկյալի չափանիշներին:
- Գործարկել հանրային հեռարձակման համար 18 նոր թվային հաճախականությունները, եւ դրանք տրամադրել բոլոր հիմնական քաղաքական եւ հասարակական ուղղությունների դիմողներին:

- Իրականացնել կուսակցությունների պետական ֆինանսավորում խորհրդարանական ընտրություններում հավաքած ամեն ձայնի համար տարեկան հազար դրամի չափով, ինչը կապահովի իշխանություններից եւ օլիգարխիայից անկախ գաղափարական կուսակցությունների համակարգի ձեւավորումը:
- Դադարեցնել տեղական ինքակառավարումը խաթարող՝ համայնքների խոշորացման գործընթացը, սահմանափակել համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետը: